# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի կարիքների համար համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի) կառուցապատման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստի**

| | |
|---|---|
| *գ. Սարչապետ* | «15» «հուլիսի» 2019թ.<br>ժ 12:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Բ. Բարոյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Է. Գրիգորյան |
| | Ս. Բարսեղյան |
| | Գ. Թովմասյան |
| | Ն. Ալեքսանյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Շ. Տոնեյան |

**1. «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին**

/Ա. Դումիկյան/

1.1 «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցման մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված դրական տեղեկատվությունը.

Հանձնաժողովը որոշեց

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հաստատել «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի գնահատման արդյունքները և հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին.

1-11 չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել հինգ օրացուցային օր /16.07.2019թ-20.07.2019թ./: Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

2. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին**

/Ա. Դամիկյան/

2.1 «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/01» ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Սարչապետ, Զ. Անդրանիկի 2, Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի | |
| Նախագահ՝ | Բ. Բարոյան |
| Անդամներ՝ | Ս. Բարսեղյան |
| | Է. Գրիգորյան |
| | Գ. [illegible] |
| | Ն. Ալեքսանյան |
| Քարտուղար՝ | Շ. Տոմեյան |